1246

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«08» 02 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0019-23

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
ք.Երևան,Չարենցի 1 շենք

Գործունեությունը՝ ***Սասունիկ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ,Աշտարակ համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0019-23

«08» 02 **2023թ.**

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված, Սասունիկ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզի Աշտարակ համայնք

Ներածական մաս. Գործունությունը նախատեսվում է իրականացնել Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, ա) ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 ք.մ-ն:

Նախատեսվող գործունեության համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտն, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20042018-02-0017 վկայականը /ծածկագիրը՝ 02-095-0029-0036/, Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքապետարանի կողմից 18.04.2022թ. տրված N86 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրաունքի տեսակը՝ սեփականություն, հողամասի ընդհանուր մակերեսը՝ 2.187 հա:

Նկարագրական մաս. Արագածոտնի մարզի այս շրջանը բնութագրվում է չոր տափաստանային և տափաստանային լանդշաֆտային գոտիներով: Այն առավելապես դրսևորվում է անդեզիտա-բազալտային, անդեզիտա-դացիտային, տուֆոլավային հրաբխահոսքերով:

Բնութագրվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները և պատմության և մշակույթի հուշարձաններ:

Նոր իրականացվող դպրոցը երկհարկանի է, նախատեսվում է տեղադրել հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ, ինչը կապահովի լսարանների գերակշիռ մասին հարավային կողմնորոշում: Նաև նախատեսվում է ունենալ բացօթյա մարզադաշտ, վազքուղի, իսկ ընդհանուր տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Առկա է նաև որպես թաքստոց ծառայող նկուղային հարկ, որի ընդհանուր մակերեսը կազմում է 572 մ²: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ ներքին բակ՝ լսարաններին լուսավորությունն ապահովելու և լրացուցիչ ռեկրեացիոն գոտի ստեղծելու համար: Առաջին հարկի մակերեսը կազմում է մոտ 3200 մ²: Հարկում տեղակայված են 1-ին ից մինչև 5-րդ դասարանների լսարանները, նախադպրոցական դասարանը, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճն իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար:

Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված վերելակը, ծնողների սպասասրահն ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն:

Երկրորդ հարկի մակերեսը կազմում է մոտ 2560 մ²: Հարկում տեղակայված են 6-ից մինչև 12-րդ դասարանների լսարանները, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանն իրեն կից լաբորատորիայով և լաբարանտական սենյակով, ֆիզիկայի մասնագիտացված լսարանն իրեն կից լաբորատորիայով, ռազմագիտության կաբինետը, հանդիսությունների դահլիճն իրեն սպասարկող սենյակների խմբով, 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Դպրոցն ունի 35մx91.5մ առանցքային չափեր և սեյսմիկ կարով բաժանված է 2 հավասար մասնաշենքերի: Միջանցքների առանցքային չափը կազմում է 3,5 մ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակներն ունեն 7մx7մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կազմում է 48 մ²: Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կազմում է 3.3 մ: Երկրորդ հակի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0 մ ծածկի տակ:

Տանիքների թեքությունը կազմում է 7 աստիճան: Տանիքի հարավ նայող լանջին նախատեսվում է տեղադրել արևային մարտկոցներ: Կառույցի արտաքին պատերն իրենցից ներկայացնում են 20 սմ ե/բ կոշտություններ, արտաքին 10 սմ ջերմամեկուսիչ շերտ և տրավերտինե երեսպատում՝ Ց/Ա շաղախով ամրանային ցանցի վրա: Դպրոցը նախատեսվում է համալրել կաթսայատնով:

ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝

- Հողամասի մակերես 2.187 հա
- Կառուցապատման մակերես՝ 3480 Քմ
- Կանաչապատ տարածք՝ 14585 Քմ
- Բարեկարգման մակերես /ճանապարհներ, ճեմուղիներ, հարթակներ/ ՝ 3805 քմ

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Դպրոցի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Հողային աշխատանքների իրականացման համար առաջարկվում է ET 14 էքսկավատորը, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:Հողային աշխատանքներ՝ հանույթ 4600մ^3, հետլիցքը 1400մ^3, իսկ ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Սասունիկ բնակավայրի կողմից օրենքով սահմանված վայր, համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ /9120060101004/ 140մ^3, տարածքում առաջացած չտեսակավորված կենցաղային աղբ /9120040001004/ 9մ^3:

Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Միջնակարգ դպրոցիի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Սասունիկ գյուղում նոր կառուցվող դպրոցի տանիքին նախատեսվում է 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում: ՖՎ վահանակները տեղակայվելու են տանիքին՝ տանիքի ուղղությանը զուգահեռ, 19° հորիզոնական թեքությամբ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Դրանք միանում են փոխակերպիչների ԱՀԿՈՒ 4 մուտքերին, փոխակերպիչների անվանական ելքային հզորությունը 60 կՎտ է /Եռաֆազ/:

Տանիքին ՖՎ վահանակները տեղակայվում են ալյումինե կրող հենակառուցվածքի վրա ձգման միջոցով: ՖՎ կրող հենակառուցվածքի բոլոր դետալները և տրամատներն էլեկտրոլիզացված ալյումինից են:

Դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծն իրականացված է հիմք ունենալով նախագծման առաջադրանքը, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի N ՎՋ-2325/2022 տեխնիկական պայմանը: Նախատեսվող ջրագիծը սնվում է համայնքային ցանցից և միանում է d=63մմ P=2.0մթն. պոլիէթիլենային ջրագծից: Նախատեսվում է կառուցել d=50մմ, L=14.0մ երկարությամբ պոլիէթիլենային արտաքին ջրագիծ միացման տեղում կառուցելով հրշեջ հիդրանտի և փականի տեղադրմամբ ջրմուղի ե/բ դիտադոր և դպրոցի պարիսպին կից ե/բ ջրաչափական հոր d=40մմ ջրաչափով:

Կաթսաները համալրված են ավտոմատացված գազի այրիչներով, տաք ջուր ստանալու համար կաթսայատանը նախատեսվում է ջրային թերթավոր տաքացուցիչներ 2 հատ (մեկը պահուստային) Q=180 կՎտ ջերմային հզորությամբ յուրաքանչյուրը: Կաթսայատանը տեղակայված են նաև, ջրատաքացուցիչները, թաղանթային ընդարձակիչ անոթը, կոլեկտորները, պոմպերը:

Ոռոգման համակարգը սնվում է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվում է մաքրման սարքավորումն միջոցով մաքրված ջուրը: Ջուրը ջրասույզ պոմպի (Гном 16-16)-ի միջոցով մղվում է ոռոգման համակարգ:

Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ: Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է ներածում միջանցքից, որը ապահովելու համար նախատեսված է ներածման դրոսել փական էլ. շարժասերով: Փականը բլոկված է արտածման օդափոխիչի հետ:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը:

Շինարարության ժամկետը որոշվել է ըստ հիմնական աշխատանքների ծավալների և դրանց աշխատատարության: Ընդհանուր տևողությունը կազմում է 600 օրացուցային օր (20 ամիս, 1 տարի 8 ամիս), բանվորների առավելագույն քանակը 44 մարդ, աշխատանքների համատեղման գործակիցը՝ 2,5, բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը՝ 1,55:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Թղկի սրատերեվ կարմիր-16 հատ, գնդաձեվ իլենի-34 հատ, սյունաձեվ թույա-33 հատ, բարդի արծաթափայլ-50 հատ, բարբարիս-15 հատ, ասպիրակ-26 հատ,ֆորզիցիա-40 հատ, խենոմելես-20 հատ, լաբոռնում անագիրատերև - 31 հատ, եղեվնի կովկասյան- 33 հատ, գիհի կազակական-33 հատ, հուդայածառ-33 հատ, ձիակասկ-46 հատ, սամշիտ-690գմ, ծաղկանոց-265մ^2, սիզամարգ- 12103մ^2:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկակակն միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը,

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն,
- անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:

Միջնակարգ դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

Կառուցապատման ընթացքում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը հաշվարկվում է 7000000 ՀՀ դրամ: Նշված արժեքը ներառում են՝ նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը:

Պարճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Սասունիկ բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություններն, որոնք առընչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Միջնակարգ դպրոցի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի

14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:

4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համայնքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

6. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:

7. ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված, Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրում նախատեսվող միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Նելլի Մովսիսյան